# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

25.01.2010թ. ժ.11: 00

**Մասնակցում էին՝**

Ս.Մնացականյան *(Խորհրդի նախագահ),* Գ.Գևորգյան, Ա.Շաբոյան, Ս.Դավթյան, Ա.Աղազարյան *(Խորհրդի անդամներ)*

Հ. Գրիգորյան *(Խորհրդի քարտուղար)*

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), *Ս. Պողոսյան (իրավաբանական բաժնի պետ*), Լ. Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), *Հ. Տիտիզյան (ֆինանսների վիճակագրության բաժնի պետ)*:

**Օրակարգի նախագծում ՝ հինգ հարց.**

1. «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի դասակարգիչը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա. Աղազարյան/*

2. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2008թ. հունիսի 2-ի Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալների հաստատման վերաբերյալ թիվ 17-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/*

3. «Հաշվետվություն կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏԳ (եռամսյակային), Ձև թիվ 1-ՏԳ (տարեկան) և «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային)» պետական վիճակագրական հաշվետվությունների և դրանց լրացման հրահանգների նախագծերը հաստատելու, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2008 թ. դեկտեմբերի 12-ի թիվ 12-Ն, 13-Ն, 14-Ն և 2009թ. փետրվարի 13-ի թիվ 12-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Հ. Տիտիզյան/*

4. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Հաղորդում Ամերիկայի Միացյալ Նահանգների Բոստոն քաղաքում 09.07-19.12.2009թ. «Տաֆթս» համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության բարձրագույն դպրոցի «ՀՀ պետական ծառայողների համար կազմակերպված ուսուցողական ծրագրի շրջանակներում մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների կատարելագործում» դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ս. Պողոսյան/*

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

**Լսեցին՝**

1. «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի դասակարգիչը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա. Աղազարյան/*

**Որոշեցին՝**

հաստատել «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի դասակարգիչը»՝ համաձայն հավելվածի:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2008թ. հունիսի 2-ի Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալների հաստատման վերաբերյալ թիվ 17-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/*

**Որոշեցին՝**

հաստատել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008թ. հունիսի 2-ի «Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալների հաստատման վերաբերյալ» թիվ 17-Ա որոշման հավելվածով հաստատված մեթատվյալներում կատարված լրացումները համաձայն հավելվածի:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

3. «Հաշվետվություն կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏԳ (եռամսյակային), Ձև թիվ 1-ՏԳ (տարեկան) և «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային)» պետական վիճակագրական հաշվետվությունների և դրանց լրացման հրահանգների նախագծերը հաստատելու, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2008 թ. դեկտեմբերի 12-ի թիվ 12-Ն, 13-Ն, 14-Ն և 2009թ. փետրվարի 13-ի թիվ 12-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Հ. Տիտիզյան/*

**Որոշեցին՝**

հաստատել «Հաշվետվություն կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏԳ (եռամսյակային), Ձև թիվ 1-ՏԳ (տարեկան) և «Հաշվետվություն կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային)» պետական վիճակագրական հաշվետվությունների և դրանց լրացման հրահանգների նախագծերը, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2008 թ. դեկտեմբերի 12-ի թիվ 12-Ն, 13-Ն, 14-Ն և 2009թ. փետրվարի 13-ի թիվ 12-Ն որոշումները:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

4. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Հաղորդում Ամերիկայի Միացյալ Նահանգների Բոստոն քաղաքում 09.07-19.12.2009թ. «Տաֆթս» համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության բարձրագույն դպրոցի «ՀՀ պետական ծառայողների համար կազմակերպված ուսուցողական ծրագրի շրջանակներում մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների կատարելագործում» դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ս. Պողոսյան/*

**Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

5. Այլ հարցեր

«Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնված գույքի կազմում և չափում փոփոխություն կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա. Հայրապետյան/*

**Որոշեցին՝**

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009թ. թիվ 37-Ա որոշման թիվ 1 հավելվածի.

2-րդ տողի «554416.0» թիվը փոխարինել «554181.9» թվով,

4-րդ տողի «56169.9» թիվը փոխարինել «56054.8» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը :

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ